Աննա Դավթյան

Հեքիաթների հեքիաթ

Ինձնից վերցվեց արտոնությունը,
հետո դատապարտվածությունը
եւ տրվեց ուրախությունը
գրելու:
Հեքիաթների հեքիաթ:
Նեանդերթալյան հովտում տղան վազում
ու գոռում է՝ գայլը,
եւ սարսափած են մեծերը,
իսկ տղայի հետեւից
հովտում չի հայտնվում ահավոր գայլը,
այլ հայտնվում է ուշադիր բնության գայլը,
որ կյանքում հազար բանի տեղ գիտի,
եւ աչքերի մեջ հազար բան տեսածի պես է,
եւ մտքում տեսել է տղային ու շատ այլ բաների է նայել՝
շուրջը եւ հեռու ծառերի մեջ,
եւ դա տեղափոխում է այնպես,
որ տղան տեսնի,ու տեսնում է,
եւ գայլի ուզածը
ցույց տալն ու խոսելն է,
եւ տղայի գոռալը վախը չէ,
ուրախությունն է:
Բարի է ուրախությունը –
հեքիաթների հեքիաթ:

Գիրք Շնորհակալության» ժողովածուից